ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Բարձրագոյն մանիֆէստ կօնստիտուցիայի մասին։— Համառուսական գործադուլ։ Հոկտեմբերի 17-ի մանիֆէստը։ Ժողովրդի քաղաքացիական ազատութիւն։ Ազատութեան տօնախմբութիւնը Ռուսիայում։ Ազատութեան Ընշանմի տարրերը եւ նոցա դիմադրութիւնը ազատական շարժման։ Խուլիգանային բարբարոսութիւններ հայրենասիրական դիմակի տակ։ Ռուս մամուլի միահամուռ բողոքը կատարուած գազանութիւնների դէմ։ Կառավարութեան մեծ սխալը։ Ի՞նչպէս պիտի հաստատուի սահմանադրութիւնը Ռուսաստանում։— Ազատութեան տօնը Թիֆլիսում։ Հոկտ. 21 ի պարադը։ Մանիֆէստացիայի նախօրը։ Մամուլի ազատութիւն։ Հոկտ 22-ի ջարդը։ Սպանուածներ եւ վիրաւորներ։ Խմբագրութեանց դնդակումը։ Սպանուածների թաղումը։ Ռումբերի առասպելը։ Հայ ժողովրդի շնորհաւորութիւնը Հոկ. 17-ի մանիֆէստի առիթով։ Կուսակցութիւնների երեւան գալը։ Զինուորական դրութեան վերացում։ Դպրոցական գործադուլ։ Եւրոպական տէրութեանց սպառնալիքը։—Հայոց ջարդը. — Ներքին լուրեր Նամակ խմբագրութեան։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԻՖԷՍՏ

Աստուծոյ ողորմութեամբ Մենք Նիկոլայ II Կայսր և ինքնակալ համայն Ռուսիայի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ իշխան Ֆինլանդիայի և այլն և այլն, յայտարարում ենք Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին, որ Մեր կայսրութեան մայրաքաղաքներում և ուրիշ շատ տեղերում եղած խռովութիւններն ու խառնակութիւնները մեծ վշտով լցնում են Մեր սիրտը։ Ռուսիայի Կայսեր բարօրութիւնը անխզելի կապուած է ժողովրդական բարօրութեան հետ և ժողովրդի վիշտը Նորա վիշտն է։

Այժմ ծագած խառնակութիւններից կարող է առաջ գալ ժողովրդական խորը անկարգութիւն և Մեր Պետութեան ամբողջութեան ու միութեան համար սպառնական դրութիւն։

Թագաւորական կոչման մեծ ուխտը հրամայում է Մեզ՝ Մեր իշխանութեան և բանականութեան բոլոր ոյժերով ձգտել շուտով վերջ դնելու Պետութեան համար այդքան վտանգաւոր խառնակութիւններին։

Հրամայելով պատշաճաւոր իշխանութիւններին միջոցներ ձեռք առնել, որպէս զի վերացուին անկարգութիւնների, խռովութիւնների և բռնութիւնների ուղղակի արտայայտութիւնները ի պաշտպանութիւն նոցա, որոնք ձգտում են իրանց պարտքը խաղաղ կերպով կատարել,

Մենք անհրաժեշտ համարեցինք միացնել բարձր կառա-

վարութեան գործունէութիւնը, որպէս զի յաջող իրագործուին մեր նախագծած ընդհանուր միջոցները Պետական կեանքի խաղաղացման համար։

Պարտք ենք դնում կառավարութեան վերայ ի կատար ածել Մեր անխախտ կամքը.

1. Շնորհել ազգաբնակութեան՝ քաղաքացիական ազատութեան անխորտակելի հիմունքներ՝ անձի իրական անձեռնմխելիութեան, խղճի, խօսքի, ժողովումների և դաշնակցութիւնների ազատութեան սկզբունքներով։

2. Զդադարեցնելով Պետական Դումայի համար արդէն նշանակած ընտրութիւնները, մինչև դումայի գումարումը մնացած ժամանակամիջոցի կարճութեան համապատասխանող հնարաւորութեան չափով դումային մասնակցելու կոչել ազգաբնակութեան այն դասակարգերը, որոնք այժմ բոլորովին զրկուած են ընտրական իրաւունքներից։ Դորա հետ միասին, ընդհանուր ընտրական սկզբունքի յետագայ զարգացումը թողնել նոր հիմնուելիք օրէնսդրական ձևին։

3. Հաստատել իբրև անխախտ կանոն, որ ոչ մի օրէնք այժ չստանայ առանց Պետական Դումայի հաւանութեան և որպէս զի ժողովրդից ընտրուածները ապահովուած՝ հնարաւորութիւն ունենան իրապէս մասնակցել այն վերահսկողութեան, որ լինելու է Մեր կողմից նշանակած իշխանութիւնների գործողութեանց օրինաւորութեան վերաբերմամբ։

Հրաւիրում ենք Ռուսիայի բոլոր հաւատարիմ զաւակներին յիշել իրանց պարտքը դէպի հայրենիքը, օգնել դադարեցնելու այս չլսուած խռովութիւնները և Մեզ հետ միասին բոլոր այժերը լարել՝ հանգստութիւնը և խաղաղութիւնը վերականգնեցնելու հայրենի երկրում։

Տուած Պետերհոֆում, հոկտ. 17-ին 1905 թ. իսկ Մեր թագաւորութեան 11-րդ տարին։

Իսկականի վերայ Նորին Կայսերական Մեծութեան սեպհական ձեռքով ստորագրուած է ՆԻԿՈԼԱՅ

Հոկտեմբեր ամսի սկիզբը ներկայացնում էր ռուս ժողովրդի յեղափոխական գործունէութեան ամենահրատապ ժամանակը, իսկ նոյն ամսի 14-ին տեղի ունեցաւ համառուսական տնտեսական և քաղաքական լիուլի գործադուլը, երբ փակուեցան բոլոր խանութներն ու գործարանները, դպրոցներն ու բոլոր հաստատութիւնները, դադարեցին տրամվայներն ու կառքերը, հեռագիրն ու հեռախօսը, երկաթուղիներն ունոցա վար-